



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ**

« 02 » հուլիսի 2018 թ.

№ 401 -Լ

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵՈՒՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1141-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեում ստեղծել մշտադիտարկման հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ ընտրանքի միջոցով պարտադիր վերապատրաստումներին և ատեստավորումներին մասնակցելու և հսկողություն իրականացնելու նպատակով:

2. Հաստատել Հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

X



**Ռ. ՄԱՇԱԴՅԱՆ**

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ  
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Նաիրա Ավանեսյան

Հայաստանի Հանրապետության պետական  
եկամուտների կոմիտեի իրավաբանական  
վարչության պետի տեղակալ

Անդամներ՝

Վարդան Սարգսյան

Հայաստանի Հանրապետության պետական  
եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության  
վարչության պետի տեղակալ

Մխիթար Այվազյան

Հայաստանի Հանրապետության պետական  
եկամուտների կոմիտեի ռիսկերի կառավարման և  
հարկային կարգապահության ծրագրերի վարչության  
պետի տեղակալ

Ռուբեն Ղամբարյան

Հայաստանի Հանրապետության պետական  
եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման  
վարչության մրցույթների և ատեստավորման  
կազմակերպման բաժնի պետ